«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ՝ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԽԱՂԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Անահիտ Սարգսյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց

ԱՐՄԱՎԻՐ- 2022

Բովանդակություն

1. Նախաբան 3

2. Գրականության ակնարկ/Հետազոտական համատեքստ 4

3. Գործնական համատեքստ 14

4. Հետազոտության ընթացք 15

5. Ամփոփում 18

6. Հետագա անելիքների ուղենշում 20

7. Գրականություն 21

Նախաբան

Տարրական դպրոցը սկզբունքորեն նոր փուլ է երեխայի կյանքում: Սկսվում է հանրակրթական ուսումնական հաստատությունում երեխայի համակարգված ուսուցումը, ընդլայնվում է նրա փոխազդեցության ոլորտը շրջապատող աշխարհի հետ, փոխվում է սոցիալական կարգավիճակը և մեծանում ինքնարտահայտման պահանջմունքը: Տարրական դպրոցում սովորողի ուսուցումը նպատակաուղղված է լեզվամտածողության, աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը, ինչպես նաև տեղի է ունենում հասակակիցների կոլեկտիվում կրտսեր դպրոցականի սոցիալականացում և սոցիալական ունակությունների զարգացում:

Անձի զարգացումը պահանջում է որոշակի պայմաններ և ջանքեր: Հայտնի է, որ երեխաները սովորում են արդյունավետ կերպով, եթե նրանք հնարավորություն ունեն հետևել հետաքրքրություններին, կատարել ընտրություն, ակտիվ համագործակցել միմյանց հետ: Ուսուցման, կրթության, քննադատական մտածողության նկատմամբ կրտսեր դպրոցականների ցանկությունն ու սերը ստեղծագործական և ակտիվ ուսուցման միջոցով զարգացնելը դաստիարակում է սոցիալապես պատասխանատու անհատներ, խրախուսում է աշակերտներին օգտագործել ուսուցման տարբեր ձևեր: Այս կապակցությամբ մշակվում են ուսումնական գործընթացի կազմակերպման նոր, արդիական մոտեցումներ, իրականացվում է երեխաների հետ աշխատանքի նոր մեթոդների և ձևերի ակտիվ որոնում, որը նպաստում է սովորողի խոսքի, լեզվամտածողության զարգացմանը, հասակակիցների փոքր խմբում իր կարծիքը, ցանկությունները, պահանջմունքները ընկալող, բավարարող անհատի ձևավորմանը, ինչով էլ պայմանավորված է հետազոտության մեր կողմից ընտրված թեմայի արդիականությունը: Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել խմբային քննարկումների ազդեցությունը սովորողների լեզվամտածողության, սոցիալական ունակությունների զարգացման վրա: Ենթադրվում է, որ կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում ինտերակտիվ ուսուցման մեթոդների, խմբային քննարկումների օգտագործումը կնպաստի ուսումնական գործընթացի և ճանաչողական գործունեության որակի բարելավմանը:

Գրականության ակնարկ/Հետազոտական համատեքստ

Ուսուցումը մանկավարժական գործընթաց է, որտեղ սովորողներն ուսուցչի օգնությամբ ձեռք են բերում գիտելիքների համակարգված կիրառման փորձ և կարողություններ: Ուսուցումը երկկողմանի գործընթաց է, որը միավորում է ուսուցչի գործունեությունը (ուսուցում) և աշակերտի գործունեությունը (ուսումնառություն): Ուսուցման արդյունքներն են ընդհանուր կրթության ստացումը, աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորումը, հետագա կյանքին նախապատրաստումը: Ուսուցիչը պետք է իմանա ուսուցման և գիտելիքների յուրացման գործընթացի հոգեբանական օրինաչափությունները, միտք, մտածողություն, խոսք զարգացնի, ձևավորի հասարակության մեջ սովորողին ապրելու համար միշտ անհրաժեշտ շփվելու, հաղորդակցվելու, լսելու, համագործակցելու, միմյանց հետ հաշվի նստելու, նպատակին ուղղված գործողություններ պլանավորելու, իրագործելու սոցիալական կարողություններ, հմտություններ, արժեքներ:

Խմբային քննարկումների կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են, երբ սովորում են միասին: Խմբային քննարկումների հիմքում ընկած են հիմնականում սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության տեսությունները: Հաճախակի կիրառվող խմբային քննարկումների արդյունքում նախ ձևավորվում, ապա զարգանում են կրտսեր դպրոցականի լեզվամտածողությունը, բանավոր խոսք մշակելու, կառուցելու, ներկայացնելու, հիմնավորելու, ինչպես նաև հասակակիցների խմբի հետ հարաբերվելու սոցիալական կարողություններն ու հմտությունները: Ուսումնական գործընթացում աշակերտական խումբը դիտարկվում է որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության, իսկ ներխմբային լարումը կամ ջանքերի միավորումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

Վիգոտսկին ասում էր, որ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և այն ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածն ընկերոջը բացատրելն է [4, էջ 413]: Խմբային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբի աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը դրդապատճառ կամ շարժառիթ (մոտիվացիա) է դառնում ուսուցման գործընթացի համար: Ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան: Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկախվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկախվածության ազդեցությունը սովորողի նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով: Խմբային քննարկումների միջոցով սովորողի ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են.

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը,
- սովորողների լեզվամտածողության, բանավոր խոսք մշակելու, կառուցելու, ներկայացնելու, հիմնավորելու կարողությունների զարգացումը,
- հոգեբանական և ֆիզիկական առաղջության ապահովումը,
- սթրեսի հաղթահարումը,
- խմբում աշխատելու, ընկերոջը լսելու, նրա հետ համագործակցելու սոցիալական հմտությունների ձևավորումը,
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Խմբային քննարկումների միջոցով ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր:

Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի: Խմբային ուսուցման ընթացքում ուսուցիչը իրականացնում է առաջադրանքների պլանավորում, սովորողների խմբերի ձևավորում, սովորողների տեղաբաշխում, առաջադրանքի ներկայացում, խմբային աշխատանքի կազմակերպում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում միջամտություն, սոցիալական հմտությունների զարգացման հարցում օգնություն, գնահատում:

Լ.Ս.Վիգոտսկին է առաջ քաշել երեխայի հոգեկան զարգացման մեջ կրթության և դաստիարակության ղեկավարող նշանակության գաղափարը. կրթությունը գնում է զարգացման առջևից և տանում է նրան: Առանց ուսուցման չի կարող լինել լիարժեք զարգացում: Ուսուցումը չի ժխտում զարգացման ներքին օրինաչափությունները [4, էջ 413]: Արդյունքում՝ անձի մոտ ի հայտ են գալիս այս կամ այն հատկանիշները, որոնք նրա հետագա ամբողջ կյանքում ուղեկցում են նրան:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխաների ֆիզիկական, հոգեբանական զարգացումը տարբերվում է իր առանձնահատկությամբ: Հենց այս տարիքում է, որ գիտական-ստեղծագործական ունակությունների զարգացումը կարևոր է, Հայտնի է, որ որոշակի մանկավարժական պայմաններին ուսուցման մեթոդների, հնարների համապատասխանությունն ապահովելը ուսումնառության որակի բարձրացման գործոններից մեկն է: Այն բերում է անհրաժեշտ գիտելիքների ամուր յուրացմանը, ուսումնական գործընթացում ուսուցիչ-աշակերտ համագործակցության միասնական նպատակին: Ուսուցման նկատմամբ աշակերտների վերաբերմունքը որոշելու մեկ այլ գործոն է ուսուցչի անձը: Ուսուցչի անձնային հատկանիշները, դասի ընթացքում նրա գործունեությունը, անձնական օրինակը գիտելիքի նկատմամբ կրտսեր դպրոցականի հետաքրքրության առաջացման հիմնական աղբյուրն են: Կրտսեր դպրոցականի համար խիստ կարևոր է և ուսուցչի հեղինակությունը, և աշակերտների հանդեպ նրա վերաբերմունքը, շփման, հաղորդակցման ոճը, անձնական օրինակը, վստահությունը: Ուսուցումը և ուսումնական նյութի ընկալումը կատարվում է ավելի արդյունավետ, եթե երեխան ցույց է տալիս հետաքրքրություն, ակտիվ է նոր գիտելիքների ձեռքբերման գործընթացում: Այս երևույթը մանկավարժական տեսության մեջ կոչվում է ուսուցման մեջ սովորողների ակտիվության և ինքնուրույնության սկզբունք: Աշակերտի կողմից հասարակական մշակույթի նվաճումների յուրացումը միշտ

գործուն բնույթ է կրում: Եթե կրտսեր դպրոցականը պասիվ չէ այդ գործընթացում, այսինքն՝ չի հարմարվում սոցիալական միջավայրի պայմաններին, ապա հանդես է գալիս որպես դրա փոխակերպման ակտիվ սուբյեկտ, վերարտադրում և իր մեջ ներքնայնացնում է մարդկային ունակություններ, արժեքներ մասնավորապես՝ ճանաչողական և սոցիալական ակտիվություն, իսկ դա կապված է ուսումնական գործընթացի կազմակերպման եղանակից, ուսուցչի մոտեցումներից, օգտագործվող մեթոդներից: Աշակերտի ակտիվությունն ապահովող ինտերակտիվ մեթոդները նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետությանը:

Վարքագծային առանձնահատկությունների ձևավորումը տեղի է ունենում սոցիումում՝ հանրային փորձի յուրացմամբ: Ն.Ֆ.Տալիզինան գրել է. «Մարդը չի ծնվում պատրաստի տրամաբանական լեզվամտածողությամբ, աշխարհի մասին պատրաստ գիտելիքներով: Բայց նա կրկին չի հորինում ոչ տրամաբանական մտածողության օրենքները, ոչ էլ հասարակությանը հայտնի բնության օրենքները: Այս ամենը նա յուրացնում է կյանքի ընթացքում» [11, էջ 172]: Դպրոցում կրտսեր դպրոցականի ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրներին, ձևերին, սովորողի ակտիվությունն ապահովող մեթոդների կիրառությանը մեծ ուշադրություն է դարձվում: Հատկապես ակտիվորեն դրանով սկսեցին զբաղվել մանկավարժական տեխնոլոգիաների զարգացման վերջին տարիներին [6, էջ 116]: Սկզբնական կրթության պետական չափորոշչային պահանջը ներկայացվում է աշակերտի լեզվամտածողության, բանավոր և գրավոր խոսքի, շփման, հաղորդակցման, խմբում աշխատելու, քննարկումներին ակտիվ մասնակցելու, անհատական սոցիալական հատկանիշների զարգացմանը: Չափորոշչային պահանջն իր մեջ ներառում է. կրտսեր դպրոցականի ինքնազարգացման պատրաստվածություն ու կարողություն, սովորելու և ճանաչելու մոտիվացիայի ձևավորում, սովորողների արժեքային-իմաստային դիրքորոշումներ, որոնք արտացոլում են անհատական, անձնային դիրքորոշումները, սոցիալական իրավասությունները, անձնային որակները, քաղաքացիական ինքնության հիմքերի ձևավորումը:

Տարրական դպրոցում ուսումնական գործունեությունը կամ ուսուցման գործընթացը իրականացվում է տարբեր ուղղություններով, ուստի կարևոր է, որ այդ գործընթացները վերահսկվեն մեծահասակների կողմից: Միայն այս դեպքում

հնարավոր է հասնել լավ արդյունքների աշակերտի անձի զարգացման գործում: Փորձառու ուսուցչի օգնությամբ, կրտսեր դպրոցական տարիքին բնորոշ երեխայի գործունեության արդյունքում կարող է իրականացվել արդյունավետ ուսուցում: Համակարգված գործունեության մոտեցումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը և համապատասխանում կրտսեր դպրոցականին բնորոշ տարիքային առանձնահատկությունների պահանջներին: Ժամանակակից տարրական կրթությունը հիմք է ստեղծում երեխայի ուսումնական գործունեության, ուսումնական և ճանաչողական մոտիվացիայի, ուսումնական նպատակներ սահմանելու, իրականացնելու, պլանավորելու, վերահսկելու և գնահատելու կարողություններ և արդյունք ձևավորելու համար: Հենց դպրոցական ուսուցման սկզբնական աստիճանն է, որ պետք է ապահովի սովորողների ճանաչողական մոտիվացիան և հետաքրքրությունները, ուսուցչի և դասընկերների հետ համատեղ ուսուցման և համագործակցության պատրաստակամությունը և ունակությունը, ձևավորեն հասարակության հետ անձի հարաբերությունները պայմանավորող հանդուրժողականություն, համագործակցելու պատրաստակամություն, ընկերոջը լսելու, օգնելու բարոյական վարքագծի հիմունքներ:

Ժամանակակից տարրական կրթության բովանդակության առանձնահատկությունը ոչ միայն այն հարցի պատասխանն է, թե կրտսեր դպրոցականն ինչ պետք է իմանա, այլև շփման, հաղորդակցման ճանաչողական, կարգավորման անհատական, ոլորտներում համընդհանուր ուսումնական գործողությունների ձևավորումը, որն ապահովում է հիմք ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման ունակության հետագա զարգացման համար [8, էջ 448]: Կրտսեր դպրոցական տարիքում շարունակվում է երեխայի անձի սոցիալ-անձնային զարգացումը: Այս տարիքային շրջանը բնութագրվում է շրջապատող մարդկանց, հասակակիցների և մեծահասակների մասին պատկերացումների բավականին գիտակցված համակարգի, սոցիալական և միջանձնային հարաբերությունների, բարոյահոգեբանական նորմերի հաստատումով, որի հիմքի վրա կառուցվում են հասակակիցների, մեծահասակների, հարազատների և այլոց հետ փոխհարաբերություններ, շփումներ, կապեր: Երեխայի ինքնագնահատականը, մնալով բավականին լավատեսական և բարձր, դառնում է ավելի օբյեկտիվ և ինքնաքննադատական [7, էջ 89]:

Տ.Ս.Պանինան և Լ.Ն.Վավիլովան գտնում են, որ ուսուցումը պետք է հետաքրքիր լինի երեխայի համար, բայց միևնույն ժամանակ պետք է երեխաներից պահանջվի և նրանց համար ոչ հետաքրքիր, բայց անհրաժեշտ, պարտադիր առաջադրանքների ճշգրիտ կատարում՝ ոչ չափից ավել շեղվելով, ոչ էլ մյուս կողմը ծանրաբեռնելով, խթանելով ակամա (պասիվ) ուշադրությունը, զարգացնել կամայական (ակտիվ) ուշադրությունը, որը թեև դեռևս թույլ է կրտսեր դպրոցական տարիքի երեխայի մեջ, բայց կարող է, և, պետք է զարգանա և ամրապնդվի վարժությունների միջոցով [10, էջ 176]: Խմբային ակտիվ մեթոդները ենթադրում են տարբեր ինտերակտիվ խաղերի, ակտիվացնող վարժությունների կիրառում և օգնում են պահպանել ընդհանրացման կարողությունները ավելի բարձր մակարդակի վրա: Ինտերակտիվ ուսուցման մեթոդները օգնում են երեխաներին հայտնագործություն կատարել, տեսնել և հաստատել հարաբերություններ, կապ ուսումնասիրվող նյութի և կյանքի միջև, ամփոփել կամ մասնատել որոշ փաստեր, եզրակացություններ անել: Այսպիսով, տեսնում ենք, որ կրտսեր դպրոցականները ունեն մի շարք հոգեբանական առանձնահատկություններ, որոնց հաշվառմանը, մշակմանը և կատարելագործմանը սկզբունքորեն նպաստում են խմբային աշխատանքի կազմակերպման մեթոդների կիրառումը, ինչը կարևոր է կրտսեր դպրոցականի անձը զարգացնող ուսումնական գործընթացի կազմակերպման համար [9, էջ 114]:

Խմբային արդյունավետ աշխատանքի կազմակերպման մեթոդների տեղին, նպատակային, հիմնավորված օգտագործման համար, այդ թվում նաև նյութի ողջ անհրաժեշտ ծավալն ընդգրկելու համար, անհրաժեշտ է մանրակրկիտ պլանավորել խմբային աշխատանքը. օգտագործել մեթոդներ, որոնք համապատասխանում են աշակերտների տարիքին, ինտերակտիվ մեթոդիկաների հետ աշխատելու փորձին, սովորողների համար ընտրել այնպիսի ինտերակտիվ վարժություններ, որոնք նրանց կտային թեմայի յուրացման «բանալին», հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի աշխատանքի տեմպն ու ունակությունները, մեկ պարապմունքում օգտագործելերկու-երեք (առավելագույնը) ինտերակտիվ մեթոդ: Սկզբում օգտագործել պարզ ինտերակտիվ մեթոդներ՝ աշխատանք զույգերով, փոքր խմբով, «մտագրոհ», «միկրոֆոն», իսկ հետո ավելի բարդ [5, էջ 192]:

Այսպիսով, տարրական դպրոցում խմբային աշխատանքների հաճախակի կազմակերպման միջոցով իրականացվող ուսուցումը նպաստում է սովորողների ներգրավմանը գիտելիքի գործընթացում, հնարավորություն է տալիս հասկանալ և ռեֆլեքսավորել այն, ինչ նրանք գիտեն և մտածում են գիտելիքների, գաղափարների, գործունեության եղանակների փոխանակման միջոցով: Նման ուսուցումը թույլ է տալիս կրտսեր դպրոցականներին ոչ միայն նոր գիտելիք ստանալ, այլև զարգացնում է ճանաչողական ուսումնական գործունեությունը, բանավոր խոսք կառուցելու, ներկայացնելու, լեզվամտածողության, ինչպես նաև սոցիալական կարողությունները վերափոխում համագործակցության ավելի բարձր ձևերի: Դպրոցական նստարանին արդեն տարրական դպրոցից ձևավորվող անհատական, ուսումնական և նորագույն տեղեկատվական-հաղորդակցական կոմպետենտությունը գնահատվում է որպես բոլոր նրանց վաղվա մրցունակության ապահովման կարևորագույն պայման, ովքեր սկսում են ընկալել դպրոցական ծրագրի ամենասկիզբն այսօր: Նման մոտեցումը գնահատվում է որպես երեխայի ուսումնական գործունեության կառուցվածքում սկզբնական կրթական մոտիվացիայի պահպանման հիմնարար խնդրի հնարավոր լուծում, կրտսեր աշակերտի ուսումնական գործունեության ապահովման համար:

Ժամանակակից մանկավարժությունը ուսուցման գործընթացը ժամանակակից հասարակության մեջ ապրել կարողանալու, զարգացնող ուսուցման պահանջներին համապատասխանեցնելու, անձնակենտրոն դարձնելու նպատակ ունի: Ուսուցման գործընթացում այսօր կարևորում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձեռքբերումը, այլև գիտելիքները կյանքում կիրառելու, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների և հմտությունների ձևավորումը: Ուսուցման համակարգը, բացի բուն առարկայական և մասնագիտական կրթություն ապահովելու խնդրից, ունի մեկ այլ կարևոր հիմնախնդիր. արդեն կրտսեր դպրոցից սովորողին ընդգրկել հասարակական, սոցիալական հարաբերություններում, ձևավորել շփման, հաղորդակցման, համագործակցային, ստեղծագործական, ճանաչողական-տրամաբանական կարողություններ, ինքնուրույն գործունեության ծավալելու, որոշում կայացնելու և դրանց համար պատասխանատվություն կրելու հմտություններ:

Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ ուսուցման գործընթացը ուսուցչի և աշակերտների ներդաշնակ գործունեություն է, որի ընթացքում իրակա-

նանում են որոշակի գիտելիքներ ձեռք բերելու, դրանց համապատասխան՝ կարողություններ, հմտություններ ձևավորելու նպատակադրումները: Ուսուցման գործուն կամ ակտիվ մեթոդների համախումբը ուսուցչի և սովորողների փոխազդեցության ձև է, երբ ուսուցիչն ու սովորողները փոխադարձ ազդեցության միջոցով իրականացնում են ուսումնական գործընթացը: Խմբային աշխատանքի հաճախակի կազմակերպման միջոցով իրականացվող ուսուցման դեպքում աշակերտները ոչ թե պասիվ ունկնդիր են, այլ ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ գործընթացում հիմնական գործող անձը ուսուցիչն է, ապա այստեղ թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողները հավասար իրավունք ունեն գիտելիքի ձեռքբերման, ինքնուրույնաբար հետազոտական գործունեություն ծավալելու առումներով: Բացի այդ ակտիվ կամ գործուն մեթոդների կիրառության ընթացքում սովորողը որոշակի դեր է ստանձնում և այդ դերակատարման ընթացքում նաև սովորում է: Ուսուցման փոխներգործուն կամ ինտերակտիվ (inter-փոխադարձ, act-ազդել, ներգործել. նշանակում է փոխազդել, զրուցել կամ երկխոսել) համակարգը, ի տարբերություն այլ ակտիվ մեթոդների, ենթադրում է ուսուցչի և աշակերտների ավելի ընդգրկուն փոխազդեցություն: Փոխներգործուն համակարգի կիրառության դեպքում ուսուցչի դերը նպատակների իրականացումն է՝ սովորողների գործունեությունն ուղղորդելու ճանապարհով: Նա մշակում է դասի պլանը, դասի ընթացքը, դասի յուրաքանչյուր քայլը, ամեն մի սովորողի կամ սովորողների խմբի անելիքը դասի ընթացքում: Խմբային աշխատանքը այնպիսի վարժությունների ու առաջադրանքների շարք է, որոնց հաջորդական ընթացքը և կատարումն ապահովում են ուսումնական նյութի յուրացումը, ինչպես նաև ստեղծագործական մոտեցումների մշակումը: Փոխներգործուն վարժությունների ու առաջադրանքների էական տարբերությունը ավանդական-վերարտադրողական տեխնոլոգիայում կիրառվող առաջադրանքներից այն է, որ դրանց կատարման ընթացքում աշակերտները ոչ միայն ամրապնդում կամ գործնականում կիրառում են ուսումնասիրած նյութը, այլ նաև ինքնուրույնաբար սովորում կամ ուսումնասիրում են նոր նյութը, ինքնուրույնաբար են գիտելիք ձեռք բերում:

Խմբային աշխատանքի համար մեծ է խմբերում ընդգրկված աշակերտների թվի նշանակությունը: Ամենափոքր խմբում պետք է ընդգրկած լինի առնվազն երեք աշակերտ, քանի որ դրանից պակաս լինելու դեպքում աշխատանքը խմբում դառնում

է զույգերով կամ անհատական։ Լավագույն տարբերակն այն է, երբ խմբում ընդգրկված է չորս աշակերտ. այս դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է ունենալ իր ենթաառաջադրանքը, և, ավելին, անհրաժեշտության դեպքում խմբի անդամներին կարելի է հեշտությամբ բաժանել զույգերի։ Վեցից ավելի աշակերտից բաղկացած խմբերը դժվար է կառավարել, քանի որ որոշ աշակերտներ կարող են որոշել չմասնակցել խմբի աշխատանքներին և նույնիսկ խանգարել մյուսներին։

Խմբերը կարող են լինել միատարր և բազմատարր։ Միատարր կառուցվածք ունեցող խմբերի ձևավորման մոտեցումները և առանձնահատկությունն է, որ տվյալ առարկայից խմբում ընդգրկված աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրքրությունները գրեթե նույնն են։ Բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն է, որ տվյալ առարկայից խմբում ընդգրկված աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրքրություններն ակնհայտորեն տարբեր են։ Վերջին դեպքում կարող է օգտակար լինել դերերի բաշխումը՝ ապահովելու, որ յուրաքանչյուր խմբի անդամ, իր ընդունակությունների սահմաններում ունենա պարտականություն, ներգրավվի խմբի աշխատանքներում։ Նման խմբային աշխատանքն ապացուցում է այն տեսությունը, որ աշակերտները կարող են շատ արդյունավետ կերպով սովորել միմյանցից։ Արդյունավետ համագործակցության հիմքում ընկած է աշխատանքի հավասար բաժանումը և փոխադարձ պատասխանատվությունը։ Դրան կարելի է հասնել խմբի առանձին անդամներին որոշակի դեր, առաջադրանք կամ աշխատանք տալով։ Այսինքն խմբում կատարվում է դերերի բաշխում և աշխատանքի բաժանում։ Խմբում առաջադրանքներ և պարտականություններ բաշխելը կարող է ունենալ երկակի ազդեցություն։ Մի կողմից այն ամրապնդում է գոյություն ունեցող շփման հմտությունները, մյուս կողմից այն ստեղծում և զարգացնում է այլ սոցիալական և համագործակցային հմտություններ։ Քանի որ սկզբնական շրջանում աշակերտները չեն կարող ինքնուրույն կազմակերպել իրենց աշխատանքը, արդյունավետ կլինի, որ ուսուցիչը բաշխի դերերը (ղեկավար, քարտուղար, փաստաթուղթ կազմող, զեկուցող)։ Այս եղանակով մի կողմից հնարավոր է ժամանակ խնայել, մյուս կողմից յուրաքանչյուր երեխայի հանձնարարվում է իր ընդունակություններին առավել համապատասխան աշխատանք։ Այնուամենայնիվ, աշակերտներին պետք է նաև նոր դերերում իրենց փորձելու հնարավորություն տրվի։ Օրինակ՝ այն աշակերտը, որը

սովորաբար առաջնորդի դեր է ստանձնում, պետք է սովորի համագործակցել և առաջնորդի դեր ստանձնած այլ աշակերտների հետ և հարգել նրանց իրավունքները, սովորեն լսել ընկերոջը, իսկ ամաչկոտ աշակերտները պետք է փորձեն սովորել հրապարակավ արտահայտվել: Չնայած, որ երբեմն դասարանում որոշ դերերի տարբերությունն այնքան էլ կարևոր չէ աշակերտների համար, այնուամենայնիվ պատասխանատվության զգացումը զարգացնելու նպատակով օգտակար կլինի աշակերտներին հանձնարարել դերեր՝ ըստ ուսումնասիրվող առարկայի:

Խմբային աշխատանքն ունի բազմաթիվ առավելություններ: Նախապես լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է աշակերտների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա: Նրանք սովորում են միասին մտածել, զարգացնում են իրենց հարմարվելու ունակությունը, խմբում աշխատելու, ընկերների հետ համագործակցելու կարողությունները, փաստարկներ բերելու, իրենց տեսանկյունը ներկայացնելու, հիմնավորելու, իրենց իրավացիության մեջ համոզելու, բանավիճելու ունակությունը, այլոց նկատմամբ հարգանքը, տարակարծության նկատմամբ հանդուրժողականությունը, խմբի մաս լինելու փորձառությունը, իրենց վրա պատասխանատվություն վերցնելու, աշխատանքի բաժանում կատարելու, ժամանակի մեջ տեղավորվելու կարողությունները և հմտությունները: Սրանք այն սոցիալական կարողություններն են, որոնք ձևավորվում են խմբային աշխատանքի իրականացման ընթացքում և հետագա ամբողջ կյանքում օգտագործվում են տարբեր տեղերում ըստ անհրաժեշտության:

Գործնական համատեքստ

Խմբային քննարկումը աշակերտների հաղորդակցման և բանավոր խոսքի կառուցման ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են): Կանոնները պետք է կազմել նախապես, խմբերի միջոցով և կիրառել:

Խումբը կարող է ձևավորվել պատահականության սկզբունքով, աշակերտների ցանկությամբ կամ էլ ուսուցչի կողմից՝ միտումնավոր կերպով: Ակնհայտ է, որ վերջին տարբերակն ուսուցչին հնարավորություն կտա հասնելու դիդակտիկ նպատակներին: Դա է պատճառը, որ իմ դասարանում խմբային աշխատանքներ կազմակերպելիս ինքս եմ կազմում տարասեռ խմբեր, քանի որ այս դեպքում խմբում հնարավոր է ապահովել արդյունավետ համագործակցության բոլոր պայմանները՝

- ընդունակությունը և գիտելիքը,
- անձնական համակրանքը,
- գենդերային հավասարակշռությունը,
- էթնիկ խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը:

Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս դասընկերների հետ փոխանակել իրենց գիտելիքներն ու փորձը, համատեղ լուծել խնդիրներ: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում էաշակերտների ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտը ավելի լավ է սովորում ակտիվ մասնակցելով: Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է անհատական հարցման կիրառումը: Խմբային աշխատանքի պարագայում երեխայի ուսումնական գործընթացին մասնակից դառնալու հնարավորությունները ավելի են մեծանում

Հետազոտության ընթացք

Առարկան – Մայրենի, դասարան երրորդ

Դասագիրք Վ.Ա.Սարգսյան, Կ.Թորոսյան, Հ.Խաչատրյան, Ե.Ջիլավյան «Մայրենի 3», Մանմար հրատարակչություն, 2014 թ.:

Թեմատիկ խումբ՝ «Ժողովուրդն իմաստուն է»

Դասի թեման՝ «Հնարամիտը»

Դասի տիպը՝ նոր նյութի ուսումնասիրման, 2 +1 ժամ:

Կազմակերպման եղանակը՝ խմբային աշխատանք:

Չափորոշչային պահանջներ - հասկանալ գրական տեքստում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը, վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ:

Դասի նպատակը –

1. Բնագիրը հասկանալու, արտահայտիչ, սահուն, վարժ, անսխալ ընթերցելու կարողությունների զարգացում:
2. Երկխոսությունները հնչերանգով առանձնացնելու, իմաստն ընկալելու կարողությունների զարգացում:

Դասի ակնկալվող արդյունքները.

- Արտահայտիչ սահուն կընթերցեն բնագիրը՝ ձայնի բարձրությունն ու տեմպը համապատասխանեցնելով իրավիճակների և հերոսների հույզերին:
- Կկանխագուշակեն բնագրի դեպքերի հաջորդականությունը:
- Կբացատրեն անծանոթ բառերի իմաստները՝ օգտվելով բառարանից և համացանցից:

- Հերոսների մասին տեղեկություններ կքաղեն բնագրից և նկարազարդումից:
- Կկատարեն լեզվական աշխատանք հատկանիշ ցույց տվող բառերի շուրջ՝ գտնելով հոմանիշներն ու հականիշները:

Խմբային առաջադրանքներ

1. Լեզվաբաններ: Տեքստի միջից ընտրել անծանոթ բառերը, բացատրել հաջորդ դասին: Աշխատանքը ներկայացնել պաստառով:

2. Ազգագրագետներ: Ընտրել թեմայի վերաբերյալ ասույթ կամ ասացվածք և մեկնաբանել հաջորդ դասին: Աշխատանքը ներկայացնել պաստառով:

3. Նկարիչներ: Մտածել տեքստի բովանդակությունը, իմաստը ներկայացնելու եղանակ: Հաջորդ դասին աշխատանքը ներկայացնել պաստառով:

4. Դերասաններ: Մտածել տեքստի բովանդակությունը, երկխոսությունները, իմաստը ներկայացնելու եղանակ: Հաջորդ դասին աշխատանքը ներկայացնել պաստառով:

Դասի ընթացքը.

Խթանման համար ընթերցում ենք դասագրքում զետեղված մուտքի «պատուհանիկը»: Ուսուցիչ - Հնարավո՞ր է, որ աշխարհում լինի մի մարդ, ով կարողանա ծովի ջուրը լրիվ խմել: Պարզվում է, որ հնարավոր է, եթե … Ի՞նչ եք կարծում, ո՞ր դեպքում է հնարավոր ծովի ջուրը լրիվ խմել:

Աշակերտները կարծիքներ են հայտնում:

Ուսուցիչ – Ուզում եք իմանալ, թե ինչպես կարելի է ծովի ջուրը խմե՞լ: Ուրեմն եկեք կարդանք «Հնարամիտը» տեքստը: Խմբերին հանձնարարվում է լուռ ընթերցել դասանյութի առաջին հատվածը և պատասխանել գրատախտակին գրված հարցին. «Առանց նախօրոք մտածելու, ի՞նչ խոստում տվեց հերոսը և դա ի՞նչ հետևանք ունեցավ»:

Բնագրի երկրորդ հատվածը ընթերցելուց առաջ տրվում է խթանող հարց: «Ինչպե՞ս կարելի է օգնել հերոսին: Փորձեք գտնել հնարամիտ տարբերակ»: Երկու րոպե խմբերը քննարկում են և առաջարկում իրենց տարբերակը: Խմբերին լսելուց հետո հանձնարարվում է լուռ ընթերցել դասանյութի երկրորդ հատվածը և մեկնաբանել Եզոպոսի գտած ելքը: Խմբերը լուռ ընթերցում են տեքստի երկրորդ հատվածը: Այն համեմատում են իրենց կանխագուշակած տարբերակների հետ:

Խմբի ընտրությամբ յուրաքանչյուր խմբի սահուն, արտահայտիչ ընթերցող աշակերտները միմյանց շարունակելով, բարձրաձայն ընթերցում են տեքստի առաջին և երկրորդ հատվածներն ամբողջությամբ:

Կշռադատում. Գրատախտակին գծում է աղյուսակ՝ հերոսների անուններով և առաջարկում բնութագրել նրանց ածականներով:

Քսանթոս	Եզոպոս
մեծախոս	հնարամիտ
անմիտ	հավատարիմ
ինքնահավան	խելացի

Աշակերտները կկրկնեն հատկանիշ ցույց տվող բառերը, կգտնեն հոմանիշներ և հականիշներ: Ընդմիջումից հետո ուսուցիչը յուրաքանչյուր խմբին առաջարկում է տեստից դուրս գրել չորս բառ: Բառերը կարող են լինել անծանոթ կամ ծանոթ, բայց անհասկանալի: Այնուհետև առաջարկում է ժամացույցի սլաքների ուղղությամբ փոխանցել անծանոթ բառերով թերթիկները: Ուսուցիչն առաջարկում է խմբային աշխատանքի միջոցով բացատրել թերթիկների վրա գրված բառերի իմաստները: Երեխաները կարող են օգտվել բառարանից կամ օգտագործել համացանցը: Խմբերն աշխատում են 10 րոպե, այնուհետև ներկայացնում են իրենց աշխատանքը: Ուսուցիչը

ճշգրտում է անծանոթ բառերը, պատասխանում երեխաների հարցերին: Այնուհետև խմբերը ստանում են առաջադրանք. «Խմբային աշխատանքի միջոցով գտնել տեքստի բանալի բառը կամ նախադասությունը»: Քննարկման համար տրվում է ժամանակ՝ 5 րոպե: Ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, հիմնավորում ընտրությունը: Ուսուցիչը փորձում է ամփոփել կատարված աշխատանքը, ճշգրտում է հաջորդ դասի համար յուրաքանչյուր խմբի ստացած առաջադրանքը և հրաժեշտ տալիս աշակերտներին:

Տնային անհատական առաջադրանք

Փակցնում ենք պաստառ ծառի տեսքով: Ծառի վրա երեք տարբեր չափերի տերևների տեսքով կպչուն թղթեր են փակցված, որոնց գրված են շերտավորված տնային հանձնարարություններ՝ տարամակարդակ առաջադրանքներով: Փոքր տերևներ, էջ 61, առաջադրանք 1 ա, միջին չափի տերևներ՝ էջ 61, առաջադրանք 1 ա, բ, մեծ տերևներ՝ էջ 61, առաջադրանք 1 ա, բ: Ստացված բառակապակցություններով հորինել տեքստ:

Հաջորդ դասին խմբերը ներկայացնում են խմբային աշխատանքները պաստառներով, դերախաղով, նկարով: Ուսուցիչը լսում է խմբերի ներկայացումները, հարցեր է տալիս, գնահատում խմբերին, մեկնաբանելով նրանց աշխատանքը: Ուսուցիչը փորձում է ամփոփել կատարված աշխատանքը, հարցով. «Ի՞նչ հասկացաք մեր այս դասից», «Ի՞նչ սովորեցիք մեր դասից», «Ի՞նչ եզրակացրեցիք մեր այս դասի արդյունքում»:

Ամփոփում

Այսպիսով, խմբային աշխատանքում սովորողների միավորումը նպաստում է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը: Խմբում երեխաներին հնարավորություն է ընձեռվում գնահատել խմբի և իր սեփական գործունեությունը, արտահայտել իրենց կարծիքը, լսել ուրիշների կարծիքը, նրանց մոտ մշակվում է հենց թիմում աշխատելու ունակություն, կրտսեր դպրոցականները սովորում են լսել խմբի իրենց ընկերների կարծիքը, վերլուծել ասվածը, ինչ-որ բանի հետ համաձայնել և բացատրել, թե ինչու է համաձայն, իսկ եթե ինչ-որ բանի հետ համաձայն չէ, ապա համապատասխանաբար անհամաձայնության համար փաստարկներ բերել, ինչը նպաստում է սովորողի լեզվամտածողության, բանավոր խոսքի զարգացմանը: Դասի ընթացքում կրտսեր դպրոցականների խմբային աշխատանքը կազմակերպվում է՝ հաշվի առնելով հետևյալ պայմանները.

- խմբային առաջադրանքի կատարման նախնական նախապատրաստում, ուսուցչի կողմից ուսումնական խնդրի առաջադրում և հրահանգավորում,
- խմբում ուսումնական առաջադրանքի կատարման պլանի քննարկում և կազմում, լուծման ուղիների սահմանում, պարտականությունների բաշխում,
- խմբում առաջադրանքի կատարման փոխհամաձայնեցում, աշխատանքի բաժանում և փոխադարձ ստուգում,
- խմբային աշխատանքի վերջնական արդյունքների քննարկում, լրացուցիչ տեղեկատվություն, լրացում, ուղղում և եզրակացությունների ձևակերպում:
- խմբում սեփական աշխատանքի անհատական ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

Հարկ է նշել, որ խմբերի ուսումնական գործունեությունը ենթադրում է կրտսեր դպրոցականների շփում, այսինքն՝ պետք է հաշվի առնել առանձնահատկությունները և կազմակերպել հատուկ սոցիալականացնող, ուսուցման ընթացքում դաստիարակող

իրավիճակներ: Ուսումնական գործունեության խմբային ձևերը զարգացնում են աշակերտների միջանձնային հարաբերությունները, թույլ են տալիս հաշվի առնել կոնկրետ աշակերտի անհատական առանձնահատկությունները և սոցիալական կարգավիճակը, ինքնահաստատվել դասընկերների միջավայրում, բարձրացնում են սովորողների ինքնագնահատականը և խմբային նվաճումների փորձը:

Հետագա անելիքների ուղենշում

Կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում համոզվեցինք, որ խմբային քննարկումը զարգացնում է սովորողների միտքը, նպաստում է կրտսեր դպրոցականի լեզվամտածողության, բանավոր խոսքի, ինչպես նաև սոցիալական հմտությունների, շփման, հաղորդակցման, լսելու, համագործակցելու մշակույթի զարգացմանը, սովորողի ինքնագնահատականի ձևավորմանը: Չորրորդ դասարանի համար նախատեսել ենք շարունակել մեր աշակերտների մոտ խմբային քննարկումներ իրականացնելու կարողությունների զարգացումը:

Գրականություն

1. Безукладников К.Э. Формирование метапредметной компетентности младших школьников на основе технологии организации учебно-исследовательской деятельности / К.Э. Безукладников, Е.В. Еремеева // Мир науки. – № 1 (Т.5). – 2017. – С. 20 – 21.

2. Гребенюк О.С. Основы педагогики индивидуальности. Проблемы формирования учебной деятельности / О.С. Гребенюк, Т.Б. Гребенюк // Учеб. пособие / Калинингр. ун-т. – Калининград, 2000. – 572 с.

3. Давыдов В.В. Младший школьный возраст как особый период в жизни ребенка / Проблемы развивающего обучения. – М.: Директмедиа Паблишинг. – 2008. – 613 с.

4. Выготский Л.С. Педагогическая психология под ред. В.В. Давыдова. М.: АСТ; Астрель, 2010. - 413 с.

5. Бабанский Ю.К. Оптимизация учебно-воспитательного процесса: методические основы / Юрий Константинович Бабанский. М.: Просвещение, 1982. 192 с.

6. Зарукина Е.В. Активные методы обучения: рекомендации по разработке и применению / Е.В. Зарукина, Н.А. Логинова.- СПб: СПбГИЭУ, 2010.- 116 с.

7. Интерактивные технологии в образовательном процессе / сост. Е.Б. Манузина, Е.Э. Норина, А.Ю. Арутюнян.- Бийск: АГАО им. В.М. Шукшина.- 2014.- 89 с.

8. Коджаспирова Г.М., Коджаспиров А.Ю. Словарь по педагогике. М. : ИКЦ «МарТ»; Ростов н/Д: Издательский центр «МарТ», 2015. - 448 с.

9. Кашлев С.С. Интерактивные методы обучения / С.С. Кашлев.- М.: Мозаика-Синтез, 2015.- 114 с.

10. Панина Т.С., Вавилова Л.Н. Современные способы активизации обучения. Учеб. пособ. / М.В. Кларина – М.: Издат. центр «Академия», 4-е изд., стер. - М.: 2008. - 176 с.

11. Талызина Н. Ф. Психология детей младшего школьного возраста: формирование познавательной деятельности младших школьников: учеб. Пос. для академ. бакалавр. / Н.Ф.Талызина. - 2-е изд., перераб. и доп. - Москва: Издательство Юрайт, 2019. - 172 с.

12. Гребенюк О.С. Основы педагогики индивидуальности. Проблемы формирования учебной деятельности / О.С. Гребенюк, Т.Б. Гребенюк // Учеб. пособие / Калинингр. ун-т. – Калининград, 2000. – 572 с.

13. Давыдов В.В. Младший школьный возраст как особый период в жизни ребенка / Проблемы развивающего обучения. – М.: Директмедиа Паблишинг. – 2008. – 613 с.

14. Выготский Л.С. Педагогическая психология под ред. В.В. Давыдова. М.: АСТ; Астрель, 2010. - 413 с.

15. Бабанский Ю.К. Оптимизация учебно-воспитательного процесса: методические основы / Юрий Константинович Бабанский. М.: Просвещение, 1982. 192 с.

16. Зарукина Е.В. Активные методы обучения: рекомендации по разработке и применению / Е.В. Зарукина, Н.А. Логинова.- СПб: СПбГИЭУ, 2010.- 116 с.

17. Интерактивные технологии в образовательном процессе / сост. Е.Б. Манузина, Е.Э. Норина, А.Ю. Арутюнян.- Бийск: АГАО им. В.М. Шукшина.- 2014.- 89 с.

18. Коджаспирова Г.М., Коджаспиров А.Ю. Словарь по педагогике. М. : ИКЦ «МарТ»; Ростов н/Д: Издательский центр «МарТ», 2015. - 448 с.

19. Кашлев С.С. Интерактивные методы обучения / С.С. Кашлев.- М.: Мозаика-Синтез, 2015.- 114 с.

20. Панина Т.С., Вавилова Л.Н. Современные способы активизации обучения. Учеб. пособ. / М.В. Кларина – М.: Издат. центр «Академия», 4-е изд., стер. - М.: 2008. - 176 с.

21. Талызина Н. Ф. Психология детей младшего школьного возраста: формирование познавательной деятельности младших школьников: учеб. Пос. для академ. бакалавр. / Н.Ф.Талызина. - 2-е изд., перераб. и доп. - Москва: Издательство Юрайт, 2019. - 172 с.